

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

25.05.2021թ. ԿՆՔՎԱԾ N «ԳՀԱՊՁԲ-15/15-2021-1-ԴԲԳԳԿ-4» ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք.Երևան

«23» «06» 2021թ.

ՀՀ ԱՆ «Դատաբժշկական Գիտագործնական Կենտրոն» ՊՈԱԿ-ն, ի դեմս տնօրեն Միեր Բիշարյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ <<Գնորդ>>, մի կողմից, և «Դելտա» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Լ.Կարաբաշյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև՝ Կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, հիմք ընդունելով 25.05.2021թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-15/15-2021-1-ԴԲԳԳԿ-4 գնման պայմանագրի (Այսուհետև՝ Պայմանագիր) 8.15-րդ կետը, ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի 526-Ն որոշման 18-րդ կետը և այն հանգամանքը, որ փոփոխությունը չի դասվում վերոհիշյալ որոշման 56-րդ կետով սահմանված արհեստական փոփոխությունների շարքին, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Հետագա համագործակցության նպատակով Կողմերը որոշեցին N «ԳՀԱՊՁԲ-15/15-2021-1-ԴԲԳԳԿ-4» գնման պայմանագրի շրջանակներում 49-րդ չափաբաժնի մասով հաստատել ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույց (վճարման ժամանակացույց)՝ համաձայն կից հավելվածի:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է N «ԳՀԱՊՁԲ-15/15-2021-1-ԴԲԳԳԿ-4» գնման պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Ապրանքը մատակարարվելու է համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից սկսած՝ 30 օրացուցային օրվա ընթացքում:

2.3 Սույն համաձայնագրում չնշված՝ կողմերի գնման պայմանագրով նախատեսված մյուս կետերը, մնում են անփոփոխ:

2.4 Սույն համաձայնագիրը և հավելվածը կազմված են 2 (երկու) էջից, կնքվում են հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկ օրինակ:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳՆՈՐԴ

ՀՀ ԱՆ «Դատաբժշկական Գիտագործնական
Կենտրոն» ՊՈԱԿ
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Մ.Հերացի 5/1
Գանձապետարան
Հ/Հ 900018001975
ՀՎՀՀ 00405431
Տնօրեն՝ Մ. Ս. Բիշարյան

(ստորագրողի ու նշը)

Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«Դելտա» ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Կոմիտասի 49/4
ՀՎՀՀ 00004912
Բանկ՝ «Կոմերսբանկ» ՓԲԸ
Խ/Խ 193004670058
Տնօրեն Լ.Կարաբաշյան

(ստորագրողի ու նշը)

Կ.Տ